Յավրումյան Մարատ
ԵՊՀ, Արաբագիտության ամբիոն

Լեզվական միավորների վերջնահատվածային թեմայթների հարաբերակցության որոշ խնդիրներ գրական արաբերենի նյութի հիման վրա

Լեզվական միավորները գրական արաբերենում առաջարկվում է ներկայացնել որպես վերլուծական fā’, ɛayn, lām այբուբենի միջոցով պատկերվող ինվարիանտային հատվածի շուրջ խմբավորված բերականական նշանակություններ արտահայտող որոշակի կոնկրետ դիրքերի որոշակի կոնկրետ հերթագայություն: Այդօրինակ ներկայացման արդյունքում միավորները կստանան հետևյալ (×)(1)(2) պատկերումը, որտեղ (×) = լեզվական միավորների համար նույնական ներկայացող ինվարիանտային հատված, այլ կերպ (×) = fa’, ɛayn, lām, (1) = միավորի վերջնահատվածային թեմայթների փոփոխականության իմաստազատիչ լինելու/չլինելու հակադրություն, այլ կերպ, variable/invariable այն, ինչ արաբական լեզվաբանական ավանդույթում նկարագրվում է որպես (ħarakāt) ħarf al-’iɛrāb ~ (ħarakāt) ħarf al-binā’, (2) = միավորի՝ ինքնուրույն կամ կապակցված բառանև լինելու հակադրություն, այլ կերպ. absolutus/constructus:

Լեզվական միավորների ձևաիմաստային կազմությունն առաջարկվում է դիտարկել երկու տարբեր մակարդակներում, որոնք պայմանականորեն անվանվելու են ձևահնչույթաբանական և ձևաշարահյուսական (վերոհիշյալ մակարդակների առանձնացումը պայմանավորված է սոսկ հետազոտական կոնկրետ նպատակով):

Abs./constr. հակադրական հարաբերակցության մեջ, լեզվաբանական վերլուծության ձևահնչույթաբանական մակարդակում լեզվական միավորների միայն constr. Կարգավիճակն է ենթադրելու բառանևերի «ներքին կայացվածություն» և «ավարտուն ձևավորվածություն», որն էլ անմիջականորեն պայմանավորված է վերջիններում «լրացուցիչ» n (tanwīn) և đ (đamīr) համակարգերի գործառնությամբ:

Իր հերթին đ (đamīr) համակարգը ձևահնչույթաբանական մակարդակում պայմանավորելու է միավորների վերջնահատվածային հատույթի (վերջնաթեմայթների) փոփոխականության ապահովում: n (tanwīn) համակարգը վերոհիշյալ հատվածի (վերջնաթեմայթների) ափդպիսի փոփոխականություն անմիջականորեն չի պայմանավորելու:

Այս թողտվությունը թույլ է տալիս առնանագրել, որ ձևահնչույթաբանական մակարդակում միավորների «ներքին կայացվածությունն ու ավարտուն ձևավորվածությունն» ապահովվում է մի կողմից փոփոխական (var) վերջնահատվածով և đ (đamīr) համակարգով և մյուս կողմից՝ ոչ փոփոխական, կայուն (inv) վերջնահատվածով և n (tanwīn) համակարգով.

միավոր փոփոխական վերջնահատվածով և đ (đamīr) համակարգով	միավոր ոչ փոփոխական, կայուն վերջնահատվածով և n (tanwīn) համակարգով
(fa’, ɛayn, lām) + (var) + (đ) (×) + $^{(a),\ (u),\ (\varnothing)}$ + (đ)	(fa’, ɛayn, lām) + (inv) + (n) (×) + $^{(u)}$ + (n)

Դեպի ձևաշարահյուսական դիտարկման պլան մակարդակային անցման դեպքում արդեն իսկ «ներքին կայացվածությամբ ու ավարտուն ձևավորվածությամբ» բնութագրվող միավորների արտաքին շարահարական հարաբերությունների (այլ կերպ. այն, ինչ անվանվում է «միավորի արտաքին վերաբերույթուն») առաջնային պլանում հայտնվելը մի դեպքում պայմանավորելու է n

(tanwīn) համակարգի գործառնության զրոյացում (գոնե այնպիսի բեռնվածքով, ինչպիսին վերջինս ուներ ձևահնչույթաբանական մակարդակում) կամ վերաիմաստավորում, երբ վերոհիշյալ արտաքին շարահարական հարաբերությունների ապահովման պլանում առաջնային է գնահատվելու լեզվական միավորի վերջնահատվածային թեքույթների արդեն իսկ իմաստազատիչ փոփոխականության հանգամանքը (հմմտ. ħarf al-ʾiɛrāb արաբական լեզվաբանական ավանդույթում), իսկ մյուս դեպքում՝ արտաքին շարահարական հարաբերությունների արտահայտումը վերագրվելու է đ (đamīr) համակարգին (վերջինիս կարծես թե վերագրելով «իմաստազատիչ փոփոխականության» հատկություն, այլ կերպ ասած՝ տեղի է ունենում «վերադիրավորում», միևնույն ժամանակ լեզվաբանական վերլուծության այս մակարդակում զրոյացնելով միավորի վերջնահատվածային թեքույթների գործառնական բեռնվածքը (հմմտ. ħarf al-bināʾ արաբական լեզվաբանական ավանդույթում).

միավոր ոչ փոփոխական, կայուն վերջնահատվածով և իմաստազատիչ đ (đamīr) համակարգով	միավոր փոփոխական իմաստազատիչ վերջնահատվածով և n (tanwīn) համակարգով
(faʾ, ɛayn, lām) + (inv) + (d) (×) + $^{(a)}$ + (d^{i})	(faʾ, ɛayn, lām) + (v) + (n) (×) + $^{(u), (a), (i)}$ + (n)

Արդյունքում, մի կողմից, միավորի «ներքին կայացվածությունն ու ավարտուն ձևավորվածությունը»՝ շնորհիվ «լրացուցիչ» համակարգերի ներառման վերջիններիս կազմում, ու մյուս կողմից՝ վերջնահատվածային թեքույթների իմաստազատիչ գործառնական բեռնվածքը (կամ այդպիսի բեռնվածքի զրոյացումն ու վերջինիս «վերադիրավորումը»)՝ համապատասխան միավորի արտաքին վերաբերության հնարավորություններին ու «պահանջմունքներին» կոչված է ապահովելու նրանց գործառնության հնարավորությունը խոսքի հոսքում: